ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«12» հունվարի 2024թ. Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – տնտեսագետ

1. Տեղեկատվություն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու վերաբերյալ.

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/52» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.19-րդ կետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը իր կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում և ներկայացնում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում:

Այս կապակցությամբ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերն ուսումնասիրելիս անհրաժեշտություն է առաջացել Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված N 1.3) էլեկտրոնային թվային ստորագրությունների վավերականության

վերաբերյալ ստանալ տվյալ ոլորտը կարգավորող մարմնի՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ի դիրքորոշումը:

Վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և Արգավանդ Կահույք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված N 1), իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված N 1.3) էլեկտրոնային թվային ստորագրությունների վավերականության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով դիմել «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ /ԷԿԵՆԳ/» ՓԲԸ-ին,
- հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ից համապատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան